# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրման բաց

ՄՐՑՈՒՅԹ

| հ/հ | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը) տարածագնահատման գոտին | Ծածկագիրը Մակերեսը (քմ) | Կառուցապատման իրավունքի ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային չափը | Օգտագործման նպատակը | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Սահմանափա-կումների առկայությունը, շրջակա միջավայրի և պատմամշա-կութային հուշարձանների պահպանության միջոցառումները | Կառույցի հարկայնությունը, շինարարության սկիզբը և ավարտը | Կառուցապատման տոկոսը կանաչապատ մակերեսի հարաբերությունը կառուցապատված (անջրանցիկ) մակերեսին (փաստացի և հեռանկարային) | Տարածքի այլ սեփականատերեի և օգտագործողների տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի միավորների դրանց առկայությամբ պայմանավորված սահմանափակումների և սերվիտուտների վերաբերյալ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Մալաթիա Սեբաստիա վարչական շրջան** | | | | | | | | | | |
| *1* | *Անդրանիկի փողոց հ.95/2 7-րդ գոտի* | *Կ 2016-21 35.26քմ* | *10 տարի* | *15000 դրամ* | *հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու համար* | *բնակավայրերի, ընդհանուր օգտագործման տարածք* | *չկան* | *սկիզբը՝ ոչ ուշ մեկ տարուց շին. թույլտվությունը ստանալու օրվանից, շին.ավարտը՝ ըստ շինարարության աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի* | *կառուցապատում մինչև 20%* | *չկան* |
| **Կենտրոն վարչական շրջան** | | | | | | | | | | |
| *2* | *Հրազդանի կիրճ հ.3/1 4-րդ գոտի* | *Կ 2016-17 897.95քմ* | *15 տարի* | *740 000 դրամ* | *հանգստի գոտի կազմակերպելու համար* | *բնակավայրերի, ընդհանուր օգտագործման տարածք* | *չկան* | *սկիզբը՝ ոչ ուշ մեկ տարուց շին. թույլտվությունը ստանալու օրվանից, շին.ավարտը՝ ըստ շինարարության աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի* | *կառուցապատում մինչև 20%* | *չկան* |

1, Մրցույթի մասնակցել ցանկացող անձիք մրցույթի ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանի անցագրային սենյակում՝ Արգիշտի 1 I հարկ (մուտքն աշտարակի կողմից), ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:
2, Մրցույթի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ.514173):
3, Մրցույթի հայտերն ընդունվում են փակ ծրարի վրա նշված ծածկագրով, 2 օրինակից և ներկայացնողին տրվում է հայտը ընդունելու վերաբերյալ ստացական:
4, Մրցույթին ներկայացվող հայտի փաստաթղթերի ցանկի տրամադրումը և հայտերի փակ ծրարներով ընդունումը կատարվում է Երևանի քաղաքապետարանում՝ Արգիշտի h.1 II հարկ (մուտքն աշտարակի կողմից) բոլոր աշխատանքային օրերին ժամը 09,00-ից 16,00-ը մինչև 2016թ սեպտեմբերի 12-ը ներառյալ:
5, Մրցույթի հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ ներկայացնող հայտատուն:
6, Մրցույթի հայտերը բացվում են 2016թ.սեպտեմբերի 15-ին ժամը 16:00:
7. Մրցույթի հայտերը ամփոփվում են 2016թ սեպտեմբերի 15-ին, ժամը 17:00:

*ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*